Գնահատման և թեստավորման կենտրոնը սույն թվականի փետրվարի 1-ից սկսում է Հայաստանի Հանրապետությունում միջնակարգ հանրակրթական ծրագիր իրականացնող հաստատությունների (անկախ կազմակերպաիրավական ձևից) 2017-2018 ուստարվա շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսաց լեզու, իսպաներեն, պարսկերեն, իտալերեն), «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Ստեղծագործական աշխատանք» (շարադրություն) առարկաներից պետական ավարտական, միասնական և կենտրոնացված (բանավոր) քննությունների (2018 թվականի բուհերի ընդունելության) կազմակերպման գործընթացը:

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ:

2017-2018 ուստարվա շրջանավարտները դիմում-հայտը լրացնում են իրենց ուսումնական հաստատությունում, նախորդ տարիների շրջանավարտները՝ իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված ուսումնական հաստատությունում, որի մասին տեղեկություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել փաստացի բնակության վայրի մարզային (Երևանի քաղաքապետարանի) կրթության վարչություն:

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափի լուսանկար՝ էլեկտրոնային տարբերակը,
- անձնագրի, նույնականացման քարտի կամ ծննդյան վկայականի պատճենը,
- ***«ՎՏԲ Հայաստան բանկ»-ում*** Գնահատման և թեստավորման կենտրոնի ***160481037341*** հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ:

Միասնական և կենտրոնացված քննությունների վճարից ազատվում են հետևյալ դիմորդները՝

- պարտադիր ժամկետային ծառայությունից զորացրված անձինք,
- 1-ին և 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները,
- ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին համապատասխանաբար կցում են զինվորական գրքույկի պատճենը, հաշմանդամության տեղեկանքի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրված տեղեկանքների պատճենները, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի պատճենները:

**Դիմում-հայտերի ընդունման վերջին ժամկետը 2018 թվականի մարտի 15-ն է:**

**«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն**

**Ցանկ**
**նախորդ տարիների շրջանավարտների դիմում-հայտերն ընդունող ուսումնական հաստատությունների**

Նախորդ տարիների այն շրջանավարտները, որոնք բուհ ընդունվելու համար «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ռուսաց լեզու», «Համաշխարհային պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն, իտալերեն), «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Ստեղծագործական աշխատանք» (շարադրություն) առարկաներից հանձնելու են միասնական և (կամ) կենտրոնացված քննություններ, դիմում-հայտը լրացնում են իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված հետևյալ ուսումնական հաստատություններում.

| | |
|---|---|
| Երևան | Թիվ 65 ավագ դպրոց (Շենգավիթ) |
| | Թիվ 16 ավագ դպրոց (Էրեբունի, Նուբարաշեն) |
| | Թիվ 114 ավագ դպրոց (Կենտրոն, Նորք-Մարաշ) |
| | Թիվ 54 ավագ դպրոց (Արաբկիր) |
| | Թիվ 190 ավագ դպրոց (Մալաթիա-Սեբաստիա) |
| | Թիվ 62 ավագ դպրոց (Նոր Նորք) |
| | Թիվ 127 ավագ դպրոց (Քանաքեռ-Զեյթուն) |
| | Թիվ 118 ավագ դպրոց (Աջափնյակ, Դավթաշեն) |
| | Թիվ 170 ավագ դպրոց (Ավան, Առինջ) |
| Կոտայքի մարզ | Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց |
| | Աբովյանի թիվ 6 ավագ դպրոց |
| | Եղվարդի ավագ դպրոց |
| | Նոր Հաճնի ավագ դպրոց |
| | Բյուրեղավանի ավագ դպրոց |
| | Չարենցավանի ավագ դպրոց |
| Գեղարքունիքի մարզ | Գավառի ավագ դպրոց |
| | Սևանի ավագ դպրոց |
| | Մարտունու ավագ դպրոց |
| | Վարդենիսի ավագ դպրոց |
| | Ճամբարակի ավագ դպրոց |
| Արագածոտնի մարզ | Աշտարակի ավագ դպրոց |
| | Թալինի ավագ դպրոց |
| | Ապարանի ավագ դպրոց |
| | Ծաղկահովիտի միջն. դպրոց |
| Վայոց Ձորի մարզ | Եղեգնաձորի ավագ դպրոց |
| | Ջերմուկի ավագ դպրոց |
| | Վայքի ավագ դպրոց |

| | |
|---|---|
| Արարատի մարզ | Արտաշատի ավագ դպրոց |
| | Արարատի ավագ դպրոց |
| | Մասիսի ավագ դպրոց |
| Սյունիքի մարզ | Կապանի թիվ 9 ավագ դպրոց |
| | Մեղրու թիվ 1 միջն. դպրոց |
| | Գորիսի թիվ 4 ավագ դպրոց |
| | Սիսիանի ավագ դպրոց |
| Լոռու մարզ | Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց |
| | Ալավերդու թիվ 2 հիմն. դպրոց |
| | Սպիտակի ավագ դպրոց |
| | Ստեփանավանի ավագ դպրոց |
| | Տաշիրի ավագ դպրոց |
| Շիրակի մարզ | Գյումրու թիվ 2 ավագ դպրոց (Գյումրի, Ախուրյան) |
| | Արթիկի թիվ 3 ավագ դպրոց |
| | Մարալիկի թիվ 1 միջն. դպրոց |
| | Աշոցքի միջն. դպրոց |
| | Ամասիայի միջն. դպրոց |
| Արմավիրի մարզ | Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց |
| | Վաղարշապատի թիվ 2 ավագ դպրոց |
| | Մյասնիկյան գյուղի միջն. դպրոց |
| Տավուշի մարզ | Իջևանի ավագ դպրոց |
| | Դիլիջանի ավագ դպրոց |
| | Նոյեմբերյանի ավագ դպրոց |
| | Բերդի ավագ դպրոց |